ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ Պատմություն

Թեմա Վանի տերության ռազմաքաղաքական հզորացումը Մենուայի օրոք. Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալումը

Հետազոտող՝ Եսայան Նորայր

Սյունիքի մարզի Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչ

Ղեկավար՝ Մարինե Գրիգորյան

ԳՈՐԻՍ 2022

Իշպուինիի գահակալության տարիներ են համարվում մ.թ.ա. 825-810թթ.-ը, ընդ որում, վերջին տարիներին նա գահակալել է իր որդու՝ Մենուայի հետ: Կա նաև այլ տեսակետ Իշպուինիի թագավորության վերջին շրջանի վերաբերյալ:

Օրինակ, Մ. Կատվալյանը կարծում է, որ Սարդուրի Ա-ին հաջորդած Իշպուինին մ.թ.ա. մոտ 810թ.-ին արքունի գահը թողել է Մենուային, այնուհետև իր մյուս որդի Սարդուրիի հետ վարել է հոգևոր-կրոնապետական գործերը, որով սկզբնավորել է Բիաինի տոհմի քրմապետական ճյուղը[1] :

Իսկ Ն. Հարությունյանի դիտարկմամբ, ճիշտ է, Քելիշինում թողնվել է արձանագրություն Իշպուինիի և Մենուայի անունով, բայց իրենից հետաքրքրություն է ներկայացնում, որ Իշպուինին այդտեղ հանդես է գալիս հարուստ թագավորական տիտղոսներով, այդ նույն ժամանակ Մենուան հիշատակվում է առանց դրանց՝ չխոսելով արդեն այն մասին, որ այլ տեղ Մենուայի անունը Իշպուինիի կողքում բաց է թողնված:

Ըստ նրա՝ մշտապես հավասարակշռվում էին Մենուայի և Իշպուինիի կառավարումը: Դա լավ երևում է արձանագրություններից, որ գտնվել է Խարակոնիսում, որի համաձայն՝ և՛ Մենուան, և՛ Իշպուինին նույն կերպ հռչակվում են «հզոր» արքաներ[2]: Իսկ Մելիքիշվիլին գտնում է, որ Իշպուինիի մշտապես Մենուային հիշատակելը ակնհայտորեն բացատրվում է թագավորի ձգտումներով՝ ամրապնդել իր որդու դիրքերը՝ որպես գահի ժառանգորդ, պաշտպանել նրան գահի այլ թեկնածուներից[3] :

Այս առումով պատմագրության մեջ դեռևս վերջնական կարծիք չի ձևավորվել: Ուրարտուի պատմության մեջ առանձնակի աշխուժություն է նկատվում հատկապես այն ժամանակվանից, երբ երկրի ղեկավարման գործին մասնակից է դառնում Իշպուինիի որդին՝ Մենուան: Պահպանվել են ոչ մեծաթիվ, սակայն զգալի արժեք ներկայացնող արձանագրություններ՝ Իշպուինիի և Մենուայի համատեղ թագավորության վերաբերյալ[4]:

---

[1] Մաքսիմ Կատվալյան, Ուրարտու, «Հայկական սովետական հանրագիտարան», հտ Սովետական Հայաստան, Երևան, 1987, էջ 95:
[2] Տե՛ս Н. Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1970, էջ 142-143:
[3] Տե՛ս Г. А. Меликишвили, Древневосточные материали по истории народов закавказья, том I, Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 203:
[4] Հայ ժողովրդի պատմություն, հտ 1, ԳԱԱ, Երևան, 1971, էջ 291:

Իշպուինի (մ.թ.ա. շուրջ 825-810թթ.) և Մենուա (մ.թ.ա. շուրջ 810-786թթ.) արքաների օրոք միայն մշակվեցին պետության քաղաքական ու մշակութային զարգացման հիմնական այն սկզբունքները, որոնք այնուհետև պիտի դառնային ոչ միայն ուրարտական, այլև հետագա՝ հայկական պետական կազմավորումների գոյության գրավականը: Առաջինը՝ պետության դեռևս շարժուն սահմանների կայունացումն էր[5]:

Այդ թագավորների տարիները «հատկանշվել են Ուրարտուի՝ որպես Մերձավոր Արևելքի հզոր տերության ձևավորմամբ, կենտրոնական իշխանության ամրապնդմամբ, երկրի արտադրողական ուժերի վերելքով և շինարարական աշխատանքների ծավալմամբ»[6] :

9-րդ դարի վերջում (մ.թ.ա.) ուրարտացիները, Իշպուինիի և նրա որդու՝ Մենուայի գլխավորությամբ, Հայկական լեռնաշխարհում մի շարք նվաճումներ են կատարում և զգալի չափով ընդարձակում իրենց պետության սահմանները[7] :

Համատեղ կառավարման սկզբում նրանք մի արշավանքով հաղթեցին Մուսասիրին, որ գտնվում էր Կուրախինի մարզում և Ուրմիայի հյուսիսում գրավեցին Խատխանան[8] :

Պահպանվել է արձանագրություն դրա մասին:

«Խալդյան հզորությամբ Իշպուինին, որդին Իշտարդուրի (Սարդուրիի), Մենուան, Իշպուինիի որդին, երկիրը (քաղաքը) Արդինին նվաճեցին» և այնուհետև թվարկում են այլ տեղանուններ [9]:

Իշպուինիի և Մենուայի օրոք Ուրարտուի սահմանները ընդլայնվում են ոչ միայն հարավ-արևելյան, այլև հյուսիսային ուղղությամբ: Հարավ-արևելքում, օրինակ, նրանց տեսնում ենք նախ Արդինի-Մուսասիրում՝ Մեծ Զաբի վերին հոսանքի շրջանում, ուր երկրի նվաճումից հետո կառուցվում են պաշտամունքային շինություններ և զոհեր մատուցվում ուրարտական աստվածներին: Այնուհետև նրանք հասնում են Մեհիշտա քաղաք (Ուրմիա լճից հարավ, ասորեստանյան Մես(ս)ի) և ապա՝ մինչև Դիալայի (Տիգրիսի վտակի) ակունքները, ուր նվաճում են Բարշուա

---

[5] Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 5:

[6] Մաքսիմ Կատվալյան, Ուրարտու, «Հայկական սովետական հանրագիտարան», հտ 12, Երևան, 1986, էջ 276:

[7] Հայ ժողովրդի պատմություն, հտ 1, Երևան, 1963, խմբ՝ Պարսամյան, էջ 62

[8] Տե՛ս И. И. Мешанинов, Халдоведение, История древного Вана, Баку, 1927, էջ 20:

[9] Տե՛ս Н. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, էջ 56:

(Պարսուա) երկիրը և մեծահարուստ ավարով վերադառնում Ուրարտու: Սրանով Ուրարտուն մարտահրավեր է նետում Ասորեստանին՝ ընդհուպ մոտենալով նրա արևելյան սահմաններին[10] :

Իշպուինիի և Մենուայի արձանագրության այսպես կոչված հռչակագրով, որ գտնվել է Խարակոնիսում, Խալդի անունից պատմում է ինչ-որ Մեիշտա քաղաքի և Բարշուա (Պարսուա) երկրի նվաճման մասին: Նույն գրվածքում խոսքը գնում էր Իշպուինի և Մենուա թագավորների գործունեության մասին Բարշուա երկրի նույն Մեիշտա, Կուա(նի), Շարիտու և Նեգիբ քաղաքներում[11] :

Մեիշտան հիշատակվում է նաև որոշ ժամանակ անց՝ Մենուայի արձանագրությունում:

Բոլոր դեպքերում, Մեիշտան զբաղեցնում է կարևոր տեղ: Կարելի է ենթադրել, որ Մեիշտան հանդիսնաում է կարևոր սահմանային ամրոց Մանա և Բարշուա երկրների մեջ [12]:

Իշպուինիի և Մենուայի Խարակոնիսյան արձանագրությունը պարունակում է նաև որոշ մանրամասնություններ ուրարտացիների արշավանքի մասին Բարշուա երկիր: Արձանագրությունը վկայում է, որ ուրարտական զորքը, որ հանդես էր գալիս ընդդեմ Բարշուայի, բաղկացած էր 106 մարտական կառքերից, 9174 հեծյալներից, 2704 հետևակից: Այս թվերից երևում է, որ արշավանքը Բարշուայի դեմ զբաղեցնում էր կարևոր տեղ պատժիչ արշավների մեջ՝ լիցքավորելով ուրարտացիներին նոր երկրներիի և մարզերի նվաճման նպատակներով: Բարշուայի տարածքում ուրարտական թագավորը քշեց հսկայական գերիների զանգվածներ, նաև ձիեր, ուղտեր, եղջերավոր անասուններ[13] :

Այսպիսով, Իշպուինիի և Մենուայի համատեղ կառավարմամբ Ուրարտուի հաջողությունները հարավ-արևելքում բերեց որոշ արդյունքների. ուրարտացիները հաղթական հասան Դիալա գետի վտակին, որտեղ նվաճեցին Բարշուա (Պարսուա) երկիրը իր Մեիշտա, Կուա, Շարիտու և Նեգիբ քաղաքներով: Դժվար է որոշակի բան ասել Բարշուա երկրի նվաճման մասին[14] :

---

[10] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 291-292:
[11] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 143:
[12] Տե՛ս նույն տեղում, էջ 144:
[13] Տե՛ս նույն տեղում, էջ 145-146:
[14] Տե՛ս նույն տեղում, էջ 145:

Ուրարտուն աստիճանաբար մոտեցավ Ասորեստանի արևելյան սահմաններին[15] :

Սակայն Իշպուինին և Մենուան չսահմանափակվեցին հարավ-արևելքի նվաճումով: Եթե այստեղ Ուրարտուն գործ ունեցավ լուրջ հակառակորդների հետ, ապա հյուսիսում նրա դեմ կանգնած էին անհամեմատ ավելի թույլ հակառակորդներ [16]:

Հյուսիսային ուղղությամբ ձեռնարկված արշավանքների ընթացքում ուրարտացիները հասնում են մինչև Արաքս գետի վերին հոսանքը (Ուիտերուխի) և պատմական Կղարջք (Կատարզա): Հյուսիսում ընկած էթիունի հզոր ցեղային միության օգնությունն անգամ ի վիճակի չի լինում կասեցնելու ուրարտական զորքերի հաղթարշավը հիշյալ երկրների վրայով: Այդ հաղթանակների արդյունքներն այնքան էական էին ուրարտական պետության համար, որ Իշպուինին և Մենուան անհրաժեշտ են գտնում դրանք հավերժացնել բազմաթիվ արձանագրություններով, որոնցից պահպանվել են չորսը[17] :

Բայց պետք է հաշվի առնել, որ և հյուիսիում ուրարտացիների ճանապարհը չեղավ վարդերով լեցուն: Այստեղ նրանց տեղացիները ցույց տվեցին պատշաճ դիմադրություն:

Անկասկած, առանձին երկրները և ցեղերը չէին ուզում մնալ ուրարտական տիրապետության տակ: Այդ պատճառով ամեն անգամ ուրարտական արշավների դեմ կազմակերպված հանդես էին գալիս մի շարք ցեղեր, մարզեր, քաղաքներ և այլն: Եվ հենց ուրարտական կառավարիչները չէին բավարարվում նվաճելով մեկ երկու ցեղ և մարզեր:

Հյուսիսիում մեծ ռազմական հաջողության շարքին պետք է դասել Իշպուինիի և Մենուայի ռազմական արշավանքը ընդդեմ Ուիտերուխի, Լուշա և Կատարզա ցեղերի: Նվաճելով այդ տարածքների ցեղերին՝ ուրարտական զորքը հասավ մինչև Անաշե քաղաք և հզոր Կուկուրու: Իշպուինիի և Մենուայի արձանագրությունը միաժամանակ պարունակում է վկայություն այն մասին, որ էթիունի երկրի թագավորն էր եկել օգնության՝ Ուիտերուխի, Լուշա և Կատարզա ցեղերին զորացնելու[18] :

Ն. Հարությունյանը ոչ պատահական է համարում Իշպուինիի և Մենուայի մի արձանագրության մեջ այն հիշատակումը, որ բազմաթիվ էթիունյան թագավորներ եկել են օգնության Ուիտերուխի, Լուշա և Կատարզա ցեղերին: Սա վկայում է, ըստ

---

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 152:
[16] Տե՛ս նույն տեղում, էջ 146:
[17] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 292:
[18] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 146:

նրա, այն մասին, որ այս արշավանքը ուղղված էր ոչ միայն ընդդեմ այդ ցեղերի, այլև հենց էթիունիի դեմ[19] :

Արդյունքում Ուրարտուի հյուսիսային սահմանները կամ Ուրարտուի հյուսիսում ունեցած ազդեցությունը հասավ Արաքսի վերին հատվածի մոտ (Ուիտերուխի), հարավային ծայրերը՝ պատմական Կատարզա և Կարսի շրջան (էտիուխի)[20] :

Հյուսիսային ուղղությամբ Իշպուինիի և Մենուայի ռազմական գործողության ժամանակ ուրարտական զորքի մեծության մասին խոսում է մեծ քանակությամբ ռազմագերիների, ձիերի, խոշոր և մանր եղջերավոր անասունների փաստը, որ քշվում էին նվաճված հյուսիսային երկրներից և ցեղերից[21] :

Համաձայն ուրարտական գրավոր աղբյուրների՝ Ուիտերուխին պետք է տեղադրել էրիախիի հարավ-արևմուտքում և Աբունիի արևելքում, Արաքսի վերին հատվածում[22] :

Ինչ վերաբերում է Լուշա երկրին, որի դեմ Իշպուինին և Մենուան նույնպես վարում էին ակտիվ ռազմական գործողություններ, ապա այդ երկրի տեղադրման մասին դժվար է ասել ինչ-որ որոշակի բան[23] :

Լուշայի տարածքը պետք է փնտրել Կատարզայի հարևանությամբ[24] :

Արշավանքի երթուղին Ն. Հարությունյանի կարծիքով հետևյալն է: Նրա գրելով՝ դատելով Իշպուինիի և Մենուայի համատեղ արձանագրությունից՝ կարող ենք ենթադրել, որ այս արշավանքի երթուղին Տուշպա-Վան մայրաքաղաքից անցել է Վանա լճի արևելյան ափի միջով և Բայազիդ-Ալաշկերտ-Ձումաչայ ճանապարհով հասել է Արաքսի ափը: Հասնելով այդ գետի միջով Արաքսի և Ախուրյանի միախառնման տեղը՝ ուրարտական զորքը այնուհետև բռնեց ուղղություն հյուսիս-արևմուտք, ըստ երևույթին, Խաջիխալիլ-Արդահան-Արդանուչ ճանապարհով[25] :

Իշպուինիի մահվանից հետո Մենուան գահակալում է միայնակ:

---

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 150:
[20] Տե՛ս նույն տեղում, էջ 152:
[21] Տե՛ս նույն տեղում, էջ 151:
[22] Տե՛ս նույն տեղում, էջ 147:
[23] Տե՛ս նույն տեղում, էջ 148:
[24] Տե՛ս նույն տեղում, էջ 148:
[25] Տե՛ս նույն տեղում, էջ 150:

Ըստ Մելիքիշվիլու՝ ոչ մի հնարավորություն չկա ճշգրիտ նշել Մենուայի թագավորության սկիզբը: Ասորեստանյան արձանագրություններում Մենուան բացարձակ չի հիշատակվում[26] :

Գիտական գրականության մեջ Մենուայի թագավորության սկիզբը պայմանականորեն դրվում է մ.թ.ա. 810 թվականին [27]:

Ըստ Լեոյի՝ «Իշպուինիի մահից հետո մենակ սկսեց թագավորել Մենուան: Կորովի, հաղթող, ընդարձակ ձեռնարկությունների, մեծագործությունների մարդ էր նա և աշխարհակալ մի թագավոր: Նա մի գեղեցիկ օրինակ է տալիս արևելքի միահեծան նվաճող իշխանության»[28] :

Ուրարտական պետության ռազմական առաջընթացը, նրա իշխանության տարածումը Վանա լճի ավազանում ամփոփված սկզբնական տերիտորիայից ողջ Հայկական լեռնաշխարհի, այնտեղ այդ ժամանակ բնակվող բազմաթիվ և բազմալեզու ցեղերի և ցեղախմբերի վրա և այդպիսով նրա վերաճումը Ուրարտական տերության սկսվում է Մենուա թագավորի օրոք (810-786թթ. մթա)[29] :

Եթե Արամեն համարվում է խալդիական պետության (Ուրարտուի) հիմնադիրը, ապա Իշպուինիի որդի Մենուան հանդիսանում է խալդիական պետության ամբողջականությունը և թագավորության կենտրոնական իշխանության ամրապնդողն ու ծավալողը, որ հաջողությամբ պայքարում էր Ասորեստանի նվաճողական էքսպանցիայի դեմ [30]:

9-րդ դարի վերջից (մ.թ.ա.) Ուրարտուն դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը և գերիշխող դիրք է ձեռք բերում մյուս պետությունների նկատմամբ[31] :

Ուրարտական պետության հզորացումը առաջին հերթին պայմանավորված էր Ուրարտուի ներքին սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմամբ, ինչպես նաև հզոր և աշխարհակալ Ասորեստանի ժամանակավոր թուլացմամբ: Հատկապես 9-րդ դարի վերջից սկսած ներքին կռիվների և խռովությունների հետևանքով Ասորեստանը, տնտեսապես և ռազմական տեսակետից խիստ կերպով թուլանալով, ի վիճակի չի

---

[26] Տե՛ս Г. А. Меликишвили, նշվ աշխ, էջ 204:
[27] Տե՛ս Նույն տեղում, էջ 205:
[28] Լեո, Երկերի ժողովածու, հտ 1, Երևան, 1966, էջ 214:
[29] Գ. Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերը, Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 89, տեԲս Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 300:
[30] Խաչիկ Սամվելյան, Խալդիական հասարակություն, Երևան, 1939, էջ 11:
[31] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, 1963, էջ 62:

լինում խանգարել Ուրարտուի հզորացմանը և նրա հաղթական առաջխաղացմանը [32].

Մենուայի թագավորության ժամանակ ուրարտացիները բոլոր ուղղություններով խոշոր նվաճումներ են կատարում և ընդարձակում իրենց պետության սահմանները[33]:

Եվ եթե Իշպուինի-Մենուայի համատեղ գահակալման ժամանակ նկատվում էր 2 հիմնական երթուղի ուրարտական նվաճողական արշավանքների (հյուսիսային և հարավ-արևելյան), ապա Մենուայի ժամանակ հանդես է գալիս նաև որոշ այլ ուղղություններ՝ արևմտյան, հարավ-արևմտյան և հարավային[34] :

Մենուայի նվաճումներն են կարևոր հյուսիսում, որը նախորդեց Մենուայի մյուս արշավանքներին:

Պետք է ենթադրել, որ առաջին տեղը զբաղեցնում էր արշավանքը դեպի հյուսիս: Հյուսիսային հարևանները այդ ժամանակ թույլ հակառակորդներ էին: Ուրարտուն այստեղ գործ ուներ հատկապես անջատ-անջատ ցեղերի հետ, իսկ երբեմն՝ ցեղային միությունների հետ [35]:

Հյուսիսային շրջանների հետ կապված, մասնավորապես Անդրկովկասում, Մենուան շարունակեց Իշպուինիի քաղաքականությունը [36]:

Մենուան և նրա հաջորդները հետզհետե առաջ տարան իրենց նվաճումները Արաքսի հովտում և այդտեղից հյուսիս, դեպի Փոքր Կովկասի լեռները[37] :

Հյուսիսում Մենուան մի կողմից հասնում է Կարսի շրջանը և Ճորոխի ավազանը, իսկ մյուս կողմից՝ մինչև Արարատի հյուսիսային փեշերը՝ Արաքսի աջ ափը, որտեղ նվաճում է էրիկուախի երկիրը՝ Լուխիունի «արքունի» քաղաքով: Էրիկուախիի նկատմամբ տարած հաղթանակը ամրապնդելու և Ուրարտուի նվաճողական արշավանքները հետագայում դեպի Արաքսի ձախափնյա հատվածը տեղափոխելու նպատակով ուրարտացիները այդ երկրում՝ Արաքսի աջ ափին, կառուցում են Մենուախինիլի հայտնի քաղաք-ամրոցը (հետագա Ցոլակերտը՝

[32] Տե՛ս նույն տեղում, էջ 62-63:

[33] Նույն տեղում, էջ 63:
[34] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 153:
[35] Տե՛ս նույն տեղում, էջ 155:
[36] Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 64:
[37] Լեո, Վանի թագավորությունը (Ուրարտու), Թիֆլիս, 1915, էջ 228:

այժմյան Դաշբուռուն գյուղի տեղում): Հյուսիսում Ուրարտուի հաջորդ զոհն է դառնում Էթիունի ցեղային մեծ միությունը, որի տերիտորիան ձգվում էր Սարիղամիշից մինչև Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը[38] :

Էրիկուախիի դեմ արշավանքը բացեց միանգամայն նոր շրջան Ուրարտուի ռազմա-քաղաքական պատմության մեջ: Այդ երթուղին ամբողջովին աչքի էր ընկնում ուրարտացիների մյուս երթուղիներից: Այստեղ Մենուան ձգտում էր ձախափնյա մասին Արաքսի, Արարատյան հարթավայրի, որ ուրարտական գրավոր աղբյուրներում անվանվում է Ազա երկիր:

Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալման ժամանակ դեպի հյուսիս արշավանքի երթուղին, ինչպես հայտնի է, անցավ բավականին արևմուտքով Էրիկուախիի արշավանքից: Ուրարտական զորքը այդ ժամանակ անցնելով Արաքսի միջով Ուիտերուխի մարզի միջով՝ հայտնվեց Ախուրյանի և Արաքսի միախառնման արևմտյան մասում[39] :

Այն, թե ինչպիսի մեծ կարևորություն էին տալիս ուրարտական թագավորները այդ արշավանքի արդյունքներին, կարելի է դատել այն ոչ նվազ կարևորություն ունեցող փաստից, որ Էրիկուախիի հանդեպ հաղթանակի մասին Լուխիունի քաղաքում պատմում է մի ամբողջ շարք արձանագրություններ: Այդ արձանագրությունները գտնվել են ոչ միայն Էրիկուախիի (Ցոլակերտ) տարածքում, այլև Ուրարտական թագավորության կենտրոնում, Վանա լճի հյուսիս-արևելյան ափին (Գյուզակ, Բերկրի, Ջորավանք)[40] :

«Խալդը ուղղեց իր զենքը նվաճելու Էրիկուախի երկիրը, նվաճեց Լուխիունին՝ տապալած Մենուայի միջոցով: Խալդը ուժեղ է, Խալդյան զենքը ուժեղ է»[41] :

Մեկ այլ արձանագրության մեջ նշվում է.«Մենուան գրում է, որ գնացել է Էրիկուախի երկիրը, նվաճել է Լուխիունի երկիրը, որը հարկ է տվել Մենուային»[42] :

«Մենուան ասում է, որ ով այս արձանագրությունը ոչնչացնի և այլ վնաս տա, ով ասի, որ ինքն է նվաճել Լուխիունի երկիրը, թող նրան ոչնչացնեն Խալդը, Թեյշեբան, Շիվինին» [43]:

---

[38] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 301:
[39] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 156:
[40] Տե՛ս նույն տեղում, էջ 155:
[41] Н. Арутюнян, 2001, էջ 72:
[42] Տե՛ս նույն տեղում, էջ 72:
[43] Նույն տեղում, էջ 73:

Կարևոր է նշել, թե ինչ արդյունք բերեց հյուսիսային արշավանքները:

Ըստ Ն. Հարությունյանի՝ ներառելով այդ ցեղերի և ցեղային դաշինքների տարածքները Ուրարտական պետության մեջ՝ Մենուան ապահովեց պետության հզորությունը ռազմական և տնտեսական տեսակետից՝ ստեղծելով նախադրյալներ հետագա հաջող ռազմական հաջողությունների համար առավել լուրջ հակառակորդների դեմ հարավում և հարավ-արևելքում[44] :

Մենուան իր թագավորության վերջում մի քանի արշավանքներ է կատարում նաև դեպի հյուսիս-արևմուտք՝ Դիաուխի (ասորեստանյան Դայանի) երկրի կամ ցեղային միության դեմ: Այս ցեղային միությունը, որի տերիտորիան տարածվում էր Ալաշկերտի հովտից մինչև Ճորոխ գետը, դեռևս 13-րդ դարից (մ.թ.ա.) հանդիսանում էր Հայկական լեռնաշխարհի և Հարավային Անդրկովկասի ամենաուժեղ ցեղային միություններից մեկը: Ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ այս ցեղային միության կամ երկրի անունը պահպանվել է Հայկական Տայք, վրացական Տաո հայտնի նահանգի անվան մեջ: Մենուան իր արշավանքների ժամանակ հաղթելով Դիաուխի երկրի «թագավորին»՝ գրավում է նրա մայրաքաղաք Շաշիլուն և հասնում է մինչև Օլթի գետը: Դիաուխի երկրի «թագավորը» ստիպված է լինում ընդունել Մենուայի գերիշխանությունը, նրան հարկ վճարել և վերադարձնել Ուրարտուից փախած ստրուկներին[45] :

Արշավանքը Դիաուխիի դեմ զբաղեցնում է առանձնահատուկ տեղ Ուրարտուի ռազմա-քաղաքական պատմության մեջ՝ պահանջելով, ակնհայտորեն, նշանակալից ուժեր, առաջին հերթին, հաղթահարելու արգելքը ուղին դեպի Դիաուխի (Էթիունի և այլ երկրներ և ցեղեր): Երկրորդ հերթին, հենց Դիաուխին Ուրարտական թագավորության համար այդ ժամանակ հանդիսանում էր, ըստ երևույթին, բավականին լուրջ մրցակից: Արդեն այդ ժամանակ՝ Մենուայի արշավանքի, այն իրենից ներկայացնում էր ցեղային միավորում, որի կազմում կային նույնպես ցեղային երկրներ Բալտուլխին և Խալդիրիուլխի քաղաքը[46] :

Պահպանվել է Մենուայի արձանագրությունը, որտեղ հայտնվում է. «Մենուան ասում է՝ նվաճեցի Շաշիլու քաղաքը, կանգնեցրեցի այս կոթողը Խալդի»[47] :

---

[44] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 154:
[45] Հայ ժողովրդի պատմություն, 1963, էջ 63-64:
[46] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 158-159:
[47] Н. Арутюнян, 2001, էջ 80:

Մենուան հայտնում է ոչ միայն Շաշիլուի նվաճման, այլև Դիաուխի երկրի այլ կենտրոնների մասին, այդ թվում և Զուահինա կամ Զուանի քաղաքի մասին, որը հանդիսանում էր դեպի Դիաուխի Մենուայի արշավանքի վերջնակետերից մեկը[48] :

Որոշ փաստեր վկայում են այն մասին, որ գնացել է, ակնհայտորեն, դաժան մարտ Ուրարտուի զորքի և դիաուխիյան միության միջև. թագավորական քաղաք Շաշիլուն նվաճվեց կռվով, երկիրը իր ամրոցներով մատնվեց կրակի, ուրարտական զինվորները, հավանաբար կռվով, հասան Շեշե լեռանը և Զուահինա քաղաքին և այլն[49]:

Ուրարտական թագավորներից Մենուան առաջինն է լինում, որը գնահատում է Արարատյան դաշտի խոշոր տնտեսական նշանակությունը՝ Ուրարտական պետության հետագա հզորացման համար:

Ժամկոչյանը ևս գրում է. «Արարատյան դաշտում ուրարտացիների նվաճումը ամրապնդելու և հետագա նվաճումների համար հենակետ ստեղծելու նպատակով Մենուան Արաքսի աջ ափին, այժմյան Դաշբուռուն գյուղի մոտ կառուցում է մի քաղաք-ամրոց, որը նրա անունով կոչվում է Մենուախինիլի: Նա այստեղ ոչ միայն նշանակում է կառավարիչ, թողնում է կայազոր և փոխադրում զգալի թվով ուրարտացի գաղթականներ, այլև նրանց համար կառուցում է տաճար, զորանոցներ և բնակարաններ» [50]:

Ինչպես նշվեց, Մենուան փորձում էր ամրացնել հյուսիսային մասերը:

Մալազգիրտի շրջանը, որ հանդիսանում էր Ուրարտուի վաղեմի տարածքը, ծառայում էր կարևոր բազա հետագա արշավանքների համար, որի մասին պատմում են Հասան կալայում, Դերբենդում և Երզրումի շրջաններում արձանագրությունները[51] :

Ըստ Ն. Հարությունյանի՝ կարելի է ենթադրել, որ Մենուայի նշված արշավանքը դեպի հյուսիս-արևմուտք ուներ հետևյալ երթուղին: Զորքը Վանից սկզբից գնաց Վանի լճի արևելյան ափով և այնուհետև Արաքս գետով, Մուրադիե-Դիադին-Բայազիդ-Զումաչայ խճուղով: Անցնելով Արաքսը՝ ուրարտական բանակը,

[48] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 161:
[49] Տե՛ս նույն տեղում, էջ 162:
[50] Հայ ժողովրդի պատմություն, 1963, էջ 63:
[51] Б. Пиотровский, նշվ աշխ, էջ 63:

ըստ երևույթին, այնուհետև շարժվեց Կարս-Օկամ-Կոսոր-Օլթի-Թորթում-Էրզրում ճանապարհով [52]:

Դիաուխի, Էթիունի, Էրիկուախի և այլ երկրների դեմ տարած հաղթանակը ամրապնդում է Ուրարտուի դիրքերը հյուսիսում և ապահովում նրա թիկունքը: Մենուան արդեն բավականաչափ հնարավորություններ է ձեռք բերում իր սահմանները ընդլայնելու նաև այլ ուղղություններով: Արևմուտքում ու հարավ-արևմուտքում նա նվաճում է Ծուփանի (Ծոփք), Մելիտեա (Մալաթիա), Ուրմե (կամ Արմե), Ալզի (Աղձնիք), Խաթե, Ուլիբա և այլ երկրներ[53] :

Մենուայի արշավանքը դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ժամանակագրական տեսակետից զբաղեցնում է երկրորդ տեղը՝ հյուսիսային արշավանքից հետո: Այստեղ ուրարտացիները նույնպես բախվեցին առանձին ցեղերի և մարզերի հետ, որոնք չնայած հանդիսանում էին անհամեմատ լուրջ հակառակորդներ, բայց տեղի տվեցին Ուրարտական պետության հզոր ուժի տակ[54] :

Մենուայի արշավանքը արևմուտք պետք է տեղադրել մ.թ.ա. 807 կամ 806 թվականներին: Այդ ժամանակ Ուրարտուն, ըստ երևույթին, պատերազմական գործողություններ էր վարում 2 ուղղություններով՝ արևմտյան և հարավ-արևելյան[55] :

Մենուան իր հաջորդ ռազմական արշավանքներն ուղղում է դեպի հարավ-արևմուտք, Եփրատի միջին հոսանքի շրջանում գտնվող Ասորեստանի տիրապետությունների դեմ: Ուրարտացիք Տարոնը, Արածանիի հովիտը, Ծոփքը գրավելուց հետո հասնում են Եփրատ գետին և անցնելով այն, նրա արևմտյան ափին նվաճում են նաև Մելիտինեի (այժմյան Մալաթիա) խեթական փոքրիկ թագավորությունը [56]:

Բալուի արձանագրությունից երևում է, որ նա նվաճել է Ցուպանի երկիրը (հավանաբար Սուխմուի կամ Ալզիի մասը) և հասել է Խեթական երկրին, ընդ որում, ստացել է հարկ Մալաթիայի (Մելիդի) արքայից[57] :

Արձանագրությկունները կարևոր նյութ են տալիս արշավանքի երթուղին վերականգնելու համար:

---

[52] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 161:
[53] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 301:
[54] Տե՛ս նույն տեղում, էջ 154:
[55] Տե՛ս նույն տեղում, էջ 171:
[56] Հայ ժողովրդի պատմություն, 1963, էջ 63:
[57] Տե՛ս И. Дьяконов, Предыстория армянского народа, История армянского нагорья с 1500 по 500 г до н.э., Хурриты лувийцы протоармяне, Ереван, 1968, էջ 157:

Մենուայի արևմտյան արշավանքներից մեկ ուրիշը նկարագրված է Մուշ քաղաքում գրնված մի արձանագրության մեջ և հավանաբար նրանից ոչ հեռու գտնվող Թրմերդի արձանագրության մեջ: ըստ Մուշի արձանագրության՝ կարելի է վերականգնել արշավանքի հետևյալ երթուղին. (Կոտայք)-(քաղաք) Կուլմերի-(Կոտայք)-(քաղաք) Աթաունե-(երկիր) Ուրմե - (երկիր) Արխի (Կոտայք) [58]:

Մենուայի արշավանքի երթուղին սահմանելու համար բաց է թողնվել այն կարևոր հանգամանքը, որ ինչպես գլխավոր հռչակագրում Բալուի, այնպես էլ արշավանքի նկարագրողական մասերը նվաճված երկրների և մարզերի օրինաչափորեն հիշատակում են Շեբետերիա-Խուզանա-Ցուպանի հերթականությունը[59] :

Շեբետերիան պետք է տեղադրել ինչ-որ տեղ հայտնաբերված արձանագրության, Բալուի քաղաքի շրջանում[60] :

Նկատի ունենալով այն, որ հետագա երթուղին արշավանքի անցնում էր Արածանիի աջ ափի երկայնությամբ Ցուպանի մարզում (հին հայկական աղբյուրների Ծոփքը), դժվար չէ գալ այն եզրակացության, որ Խուզանա քաղաքը, որ հիշատակվում է Բալուի արձանագրության մեջ անմիջապես Շեբետերիայից հետո, պետք է փնտրել ինչ-որ տեղ Բալուի և հին հայկական Ծոփք մարզերի միջև: Հետազոտողները համերաշխ են այն տեսակետին, որ ուրարտական աղբյուրների Խուզանը հետագայում հայկական ամրոց Խոզանն է՝ Բալուից հյուսիս-արևմուտք, Մուզուր գետի ստորին հատվածում, նրա աջ ափին[61] :

Ցուպանի երկիրը պետք է փնտրել Մուզուր գետից արևմուտք: Հետագայում այդ տարածքում գտնվում էր մարզ, որ անտիկ պատմիչների մոտ անվանվում էր Սոֆենա, իսկ հայկական պատմիչների մոտ՝ Ծոփք[62] :

Այսպիսով, Մենուայի արշավանքի երթուղին սկզբում անցնում էր Արածանիի աջափնյա շերտով, ընդ որում, Բալուի շրջանում ուրարտական զորքը նվաճում է Շեբետերիա երկիրը, Մուզուր-խուզանա գետի վերջնամասի մոտ, իսկ նրանց և Եփրատի մեջ, հետագա հայկական Ծոփքի տեղում[63] :

---

[58] Գ. Սարգսյան, նշվ աշխ, էջ 90:
[59] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 165:
[60] Տե՛ս նույն տեղում, էջ 165:
[61] Տե՛ս նույն տեղում, էջ 166:
[62] Տե՛ս նույն տեղում, էջ 166:
[63] Տե՛ս նույն տեղում, էջ 166-167:

Մենուայի արշավանքի հետագա երթուղին սահմանելու համար ներկայացնում է որոշակի հետաքրքրություն Բալուի արձանագրության վկայությունը այն մասին, որ ուրարտական թագավորը Ցուպանիի նվաճումից հետո, մի կողմից, գնաց մինչև Խատինիլի երկիրը, իսկ մյուս կողմից, ենթարկել է Մալաթիա քաղաքի թագավորին, պայմանով՝ վճարելու տուրքեր[64]:

Պետք է ենթադրել, որ Խաթինիլիի սահմանները հյուսիսում հասնում էին մինչև Մալաթիա մարզի մոտ[65] :

Խաթե-Խաթինիլիում է վերջանում Մենուայի արշավանքի երթուղին արևմուտքում:

Համաձայն արձանագրությունների վերը նշյալ տվյալների և ուրարտական մարզերի տեղադրումի՝ կարելի է մտածել, որ մեզ հետաքրքրող Մենուայի արշավանքը Վանա լճի հյուսիսային ափով սկզբից անցել է հյուսիս-արևմուտք (Մանազկերտ) և այնուհետև արևմուտք Արածանիի հյուսիսային ափերի երկարությամբ, Խինիս-Ձիյարետ-ճապաղջուր-Պալու (Բալու) ճանապարհով: Անցնելով Արածանիով՝ ուրարտական բանակը հետագայում, հնարավոր է, հասել է մինչև էլյազիգա, իսկ հետո անցնելով Եփրատը՝ կարող է՝ գնացել է դեպի հարավ-արևմուտք՝ Կալե: Այս դեպքում կարելի է ենթադրել, որ ուրարտացիների հետագա ուղին արդեն ուղղված էր դեպի Մալաթիա[66] :

Որոշ այլ ուրարտական արձանագրություններ վկայում են, որ Մենուան նորից գնացել է Խաթե-Խաթինիլի, բայց այս անգամ այլ երթուղով[67] :

Հյուսիսային և արևմտյան մի շարք երկրների նվաճումը այն աստիճանի է բարձրացնում Ուրարտուի հզորությունը, որ նա արդեն իրեն նախապատրաստված է համարում կռվի բռնվելու էլ ավելի ուժեղ հարևանների հետ հարավում և հարավ-արևելքում: Այստեղ պատերազմի թատերաբեմ է դառնում Մանա երկիրը, որի տերիտորիան ընկած էր Ուրմիա լճից դեպի հարավ և արևելք: Ելնելով Մանայի դեմ՝ Ուրարտուն, վերջին հաշվով, մարտահրավեր էր նետում Ասորեստանին, որը նույնպես իր նկրտումներն ուներ Մանայի նկատմամբ: Հայտնի է, որ Մենուայի տիրապետության սկզբնական շրջանում, երբ նա զբաղված էր հյուսիսային ու

[64] Տե՛ս նույն տեղում, էջ 167:
[65] Տե՛ս նույն տեղում, էջ 168:
[66] Տե՛ս նույն տեղում, էջ 168-169:
[67] Տե՛ս նույն տեղում, էջ 169:

արևմտյան երկրների նվաճմամբ, Ասորեստանն արդեն արշավանքներ էր ձեռնարկել Մանայի դեմ (807-806):

Ստեղծվում է վերին աստիճանի լարված իրադրություն, երբ մի կողմից ուրարտական թագավոր Մենուան է կրկնում ռազմական արշավները Մանայի դեմ, մյուս կողմից, նրա ժամանակակից ասորեստանյան թագավոր Ադադներարի Գ-ն (810-782): Ըստ երևույթին, պատերազմական գործողությունները փոփոխակի հաջողություններ են բերում մերթ Ուրարտուին, մերթ Ասորեստանին[68] :

Հետևելով իր հոր քաղաքականությանը և հավանաբար հաշվի առնելով Ասորեստանի ծանր դրությունը՝ Մենուան նախ իր ռազմական արշավանքներն ուղղում է Ասորեստանին ենթակա և նրան անմիջականորեն սահմանակից այն երկրների դեմ, որոնք գտնվում էին Ուրմիո լճից դեպի հարավ-արևելք: Ուրարտացիք հաղթական կերպով շարժվելով դեպի հարավ-արևելք՝ իրար հետևից նվաճում են Մաննա, Բուշտու, Պարսուա և մի շարք այլ երկրներ [69]:

Մենուան մի արձանագրությունում ասում է, որ նվաճել է Մանա երկիրը, այնտեղ կանգնեցրել Խալդի կոթողը[70] :

Մենուայի արշավանքը ընդդեմ Մանայի եղել է մ.թ.ա. 807-806 թվականներին:

Կարևոր է Մեիշտայի հիշատակումը:

Մեիշտան հանդիսանում էր սահմանային ամրոց Մանայի և Պարսուայի միջև: Իր արշավանքում Մենուան հասել է մաների ընդհանրական տարածքի հարավային սահման: Այդ տարածքը մի ժամանակ հանդիսանում էր Ասորեստանի տարածք [71]:

Մենուա թագավորի առավել նշանակալից ռազմական արշավանքներից մեկը մի կողմից մղվել է Տիգրայի և Մեծ Զաբի վերին հատվածում, մյուս կողմից, Ասորեստանի հյուսիսային սահմանների մոտ: Այստեղ խոսքը գնում է Բաբանախի, Ուսուսուանի, Ուլիբա(նի), Դիրգու (նի), ցեղ Տուշուրնեխիի դեմ մղված կռիվների մասին: Բացի դրանից, տեքստում հիշատակվում է քաղաք Կալիբիլիան, Արպուիան և այլն[72] :

---

[68] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 303:
[69] Հայ ժողովրդի պատմություն, 1963, էջ 63:
[70] Տե՛ս Հ. Արտյունյան, 2001, էջ 68:
[71] Տե՛ս Հ. Արտյունյան, 1970, էջ 177:
[72] Տե՛ս նույն տեղում, էջ 172:

Մի արձանագրության ավարտական մասում նշվում է, որ այնուհետև ուրարտական բանակը հասել է Կումենու քաղաքի մոտ, մի կողմից, և Ասորեստանի տիրապետության տակ գտնվող տարածք, մյուս կողմից: Արձանագրությունում հիշատակվում է նաև Մարմանի մարզը[73] :

Նվաճելով Մանա մարզը և Մեհիշտա քաղաքը՝ Մենուայի արձանագրությունը հաղորդում է, որ դրանով Մենուան բաց արեց ճանապարհ դեպի հյուսիս-արևմուտք, Ուրմիա լճի հարավ-արևելյան ափ[74] :

Անդրադառնալով Ուրարտու-Ասորեստան հարաբերություններին Մենուա թագավորի ժամանակ՝ նշենք, որ Մենուայի ժամանակ Ուրմիայի ափին գտնվող Մանա մարզը մշտապես կռվախնձոր էր Ուրարտուի և Ասորեստանի միջև[75] :

Կելիշինի նշանավոր արձանագրությունը ցույց է տալիս ուրարտական հզորության աճումը, ուրարտացիների սպառնանքը Ասսուրեստանին իրեն երկրի մոտավոր սահմաններին, այն է՝ Փոքր Զաբի վերին հոսանքի շրջաններին. դա մի պատասխան է Շամշի-Ադադի հարձակումներին, երբ վերջինիս տուրտանը ավերում է ուրարտական 11 բերդեր և 200 քաղաք[76] :

Որոշ ընդհատումներով (մ.թ.ա. 801 և 791) Ասորեստանը ռազմական արշավանք է ձեռնարկում Խուբուշկիայի դեմ :

Ռազմական բախումները Բիայնիլիի և Ասորեստանի միջև դարձավ ավելի հաճախակի: Դրա մասին մեզ հայտնի է ասորեստանյան ցուցակով էպոնիմներից, որը մ.թ.ա. 801 և 791 թվականներին տեղեկեցնում էին արշավանքի մասին ընդդեմ Խուբուշկիայի: Ինչ վերաբերում է ուրարտական աղբյուրներին, ապա այդ մասին նրանք ոչինչ չեն պարունակում: Խուբուշկիան Ուրարտուի ողջ ընթացքում, այդ թվում և Մենուայի թագավորության ժամանակ, միշտ եղել է հիմնական տարածքը Վանի թագավորության: Ասորեստանի արշավանքը Խուբուշկիայի դեմ ուղղված էր Ուրարտուի դեմ[77]:

Եվ եթե ասորեստանցիները մ.թ.ա. 801 և 791 թվականներին հասան Բախտանի հարթավայր, ապա դա արդեն խոսում է Ասորեստանի մեծ հաջողությունների մասին հյուսիսում, և, ընդհակառակը, Բիայնիլիի

[73] Տե՛ս նույն տեղում, էջ 173:
[74] Տե՛ս նույն տեղում, էջ 176:
[75] Տե՛ս նույն տեղում, էջ 171:
[76] Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 144:
[77] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 303:

անհաջողությունների մասին: Սակայն պետք է հաշվի առնել, որ ասորեստանցիների հաջողությունները հյուսիսում Ուրարտուի դեմ կրում էին որոշ դրվագային բնույթ, որովհետև այդ արշավանքների միջակայքը մի ամբողջ տասնամյակ է: Մյուս կողմից, մենք միայն տեղեկանում ենք ասորեստանյան արշավանքի մասին Խուբուշկիայի դեմ, բայց ինչով է ավարտվել ասորեստանյան-ուրարտական բախումը, ոչինչ չգիտենք: Դժվար է հավատալ Ադադնիրարի 3-րդի խոսքերին այն մասին, որ նա նվաճել է Նաիրի երկիրը իր բոլոր տարածքներով: Դա նա չէր կարող անել ոչ Մենուայի թագավորության, ոչ էլ առավել ևս Արգիշթիի կառավարման ժամանակ[78] :

Ուրարտուն ժամանակավորապես չեզոքացնում է Ասորեստանին, որը այլևս փորձեր չի անում իր հյուսիսային հարևանի բուն երկրի վրա հարձակվելու: Ընդհակառակը, դեպի հարավ-արևելք ձեռնարկած արշավանքներից մեկի ժամանակ ինքը Մենուան է հասնում մինչև Ասորեստանի սահմանները [79]:

Մենուայի առավել մեծ հաջողությունները հյուսիսում, արևմուտքում, հարավ-արևմուտքում, հարավում և հարավ-արևելքում վկայում են այն մասին, որ Ուրարտուն ամեն տարի դառնում էր ավելի հզոր ուժով ոչ միայն ամբողջական շարք մեծ մարզերի և ցեղերի դաշինքների համար, այլև հիմնական իր հակառակորդի՝ Ասորեստանի համար: Աստիճանաբար հավասարակշռվեց ուժերը և արդեն Մենուայի կառավարման վերջում Վանի թագավորությունը Ասորեստանի դեմ սկսեց ինչ-որ չափով հանդես գալ ընդհանրական տարածքով Առաջավոր Ասիայի[80] :

Ասորեստանը ոչ միայն դիմադրություն ցույց չի տալիս Ուրարտուի հաղթական առաջխաղացմանը, այլև իրար ետևից կորցնելով իրեն ենթակա երկրամասերը, շուտով ինքը ևս կանգնում է ուրարտացիների ներխուժման վտանգի առաջ[81] :

Ասորեստանի դեմ վճռական գործողությունները Մենուայի կողմից վերաբերում է մ.թ.ա. 800-790-ական թվականներին[82] :

Այսպիսով, Մենուայի ռազմական նվաճումների շնորհիվ Ուրարտուն տարեցտարի ավելի ու ավելի էր ամրապնդում իր դիրքերը Առաջավոր ասիայում: Նրա թագավորության վերջին շրջանում Ուրարտուն շատ անախորժություններ է պատճառում Ասորեստանին: Աստիճանաբար հավասարակշռվում են Ուրարտուի և

---

[78] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 177-178:
[79] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 303:
[80] Տե՛ս Н. Арутюнян, 1970, էջ 178:
[81] Հայ ժողովրդի պատմություն, 1963, էջ 63:
[82] Տե՛ս И. Дьяконов, նշվ աշխ, էջ 156:

Ասորեստանի ուժերը: Ուրարտուն նախապատրաստվում է ապագա էլ ավելի ահեղ մարտերի, որոնք արդեն բաժին են ընկնում Մենուայի հաջորդին՝ Արգիշտի Ա-ին[83] :

Նվաճումների ամփոփումը բերում է հետևյալ եզրահանգումների:

Վանի թագավորները, քաղաքականապես միահյուսելով պատմական Հայաստանի սահմաններում ու նրանից դուրս գտնվող զատ-զատ ցեղային միություններն ու էթնիկ խմբերին, ստեղծեցին հինարևելյան տիպի դասակարգային ստրկատիրական հզոր թագավորություն[84] :

Ըստ Գագիկ Սարգսյանի՝ «Ուրարտուն իրեն ենթարկեց տեղաբնիկ, ոչ ուրարտական՝ հայկական, խուռի քանակապես շատ ավելի բնակչություն ունեցող ցեղերին, էթնիկ խմբերին, որոնք իբրև ժողովուրդ դեռ չէին ձևավորվել: Ուրարտական պետության մեջ միասնական ժողովուրդ չէր առաջացել»[85] :

Ըստ Գր. Ղափանցյանի՝ «Մենուայի քաղաքական լայնածավալ էքսպանցիան Տավրոսից մինչև Արարատյան դաշտը և Ուրմիա լճից մինչև Մելիտենե, ինչպես և այդ թագավորի գրանդիոզ շինարարությունը մեզ վկայում են, որ Ուրարտուն այլևս Արամեի և Սարդուրիի շրջանի հասարակա-քաղաքական միավորը չէ, այլ որակով նորը, փոխվածը, ավելի ուժեղը և ավելի լավ կազմակերպվածը: Իրոք որ միայն այդ ժամանակից գոյություն ստացավ Ուրարտուի պետությունը, և Մենուան նրա այդ վիճակի մարմնավորողն ու արտահայտիչն էր»[86] :

Մենուան նաև զբաղվում է պետության կենտրոնախույս ձգտումների ջախջախմամբ, պետության ներքին համախմբմամբ, կենտրոնական իշխանության ամրապնդմամբ, երկրի տարբեր շրջանները անվերապահորեն կենտրոնին ենթարկելու ջանքներով:

---

[83] Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 303:
[84] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971, էջ 72:
[85] Գ. Սարգսյան, նշվ աշխ, էջ 89:
[86] Գր. Ղափանցյան, նշվ աշխ, էջ 155-156:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ. Սարգսյան, Ուրարտական տերությունը և հայերը, Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988:

2. Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940.

3. Լեո, Երկերի ժողովածու, հտ 1, Երևան, 1966:

4. Խաչիկ Սամվելյան, Խալդիական հասարակություն, Երևան, 1939:

5. Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971:

6. Հայ ժողովրդի պատմություն, հտ 1, ԳԱԱ, Երևան, 1971:

7. Հայ ժողովրդի պատմություն, հտ 1, Երևան, 1963, խմբ՝ Պարսամյան:

8. Մաքսիմ Կատվալյան, Ուրարտու, «Հայկական սովետական հանրագիտարան», հտ 12, Սովետական Հայաստան, Երևան, 1987:

9. Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990:

10. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), Москва, 1959.

11. Г. А. Меликишвили, Древневосточные материали по истории народов закавказья, том I, Наири-Урарту, Тбилиси, 1954:

12. Н. Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1970.

13. Н. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

14. И. Дьяконов, Предыстория армянского народа, История армянского нагорья с 1500 по 500 г до н.э., Хурриты лувийцы протоармяне, Ереван, 1968.

15. И. И. Мешанинов, Халдоведение, История древного Вана, Баку.